բաքանչիւր գործոց ըստ Օրինօքն հայաստանեաց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց այսմ աւուր յամսեանն յունվարի մին յամի Տեառն փրկչին մերոյ 1773։

Վկայեմք, որ ձեռնադրեցին, կնքեցին և յանձնեցին.

Միքայէլ իշխան . ○
Մանուէլ Գծագիր . ○

Սեղբեստրոս արք Եպիսկոպոս երկրորդ } ○
Տանուտէր.

Վրթանէս կաղնոյ երրորդ տանուտէր. } ○

Գալստան կաղզվանու չորրորդ տանուտէր։ } ○

Օրինակ նամակի դպրութեան Ատենաբանից։

ԳԼՈՒԽ Կ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան յաշխարհէն կորճակայ, հայքա և թուղթ փոխանորդութեան նոցա առ քեզ Արիստակէսիդ 'ի գեղջէն արգնկանու համարեցաք քեզ հաւատարիմ տանն Հայոց, տուաք քեզ նամակ Շնորհաց և պաշտօնի ատենաբանութեան ժամանակաւ երիս ամաւ, առաջի ատենի տանն և յապարանն դատաստանի 'ի ծածուկ խորհրդարանի հայոց, վասն որում տեղի որ վիճակեալ իցէ զի դու Արիստակէսդ կացցես և մնացես 'ի վերայ հիման հաստատութեան, ազատապէս ջատագովել